նաւանդ որ «Հայք ի բերան առեալ ասեն վայրաբար քահանայք եւ ռամիկք եւ մանկունք եւ կողեռք եւ հաւատաւոր կանայք»։ «Եւ գնացի, գրում է Գառնեցին իւր յիշատակարանի մէջ, ի սուրբ ուխտն Հաղբատ եւ երկրպագեցի սուրբ խաչին եւ սուրբ գերեզմանին մեծ եւ տեսանող հայոց սուրբ վարդապետին Յովանէսի, մականուն Սարկաւագ, այն որ զՍաղմոսն բազում ճգամբ ի թարգմանչաղիր սաղմոսարանէ գաղափարեաց։ Եւ իմ հանդիպեալ նոյն Սաղմոսարանի սուրբ վարդապետի, առեալ համբուրեցի։ Եւ գրեցի յիւրմէն ամենայն ստուգութեամբ զբանն, զգիրն, զհարցուկն, զհանգիստն, զտունն, զկէտն, զստորն» (Յաւել. Բ. 46)։ Գառնեցին յանձնարարում է իւր այսպէս սրբագրած օրինակը, որ ապագայում մեծ հեղինակութիւն է ստանում եւ շատերն են արտագրում «ի յընտիր աւրինակէ Գառնեցւոյ»(*)։

Նա գրել է եւ հոգեւոր երգեր։ ԺԴ. դարում աբեւելեան Հայաստանում ծաղկել է սկսում հոգեւոր երգերի, տաղերի եւ գանձերի գրականութիւնը, Վարդան (ոչ Բարձրբերդցի, ինչպէս կարծում է Ամատունին), Մխիթար Այրիվանեցի, Խաչատուր Կեչառեցի, Մկրտիչ, Յովհաննէս Երզնկացի, Կիրակոս Երզնկացի են. ձգում են այդ գանձանակի մէջ իրենց արժէքաւոր եւ անարժէք լումաները. Յովհաննէս Գառնեցին եւս իւր բաժինն ունի այդտեղ։ Տարաբաղդաբար մեր գրականութեան այդ մասը հարկաւոր ուշադրութեան չէ արժանացած եւ տակաւին մթութեան մէջ է, դժուար է որոշել, թէ նոյնանուն հեղինակների գործերից ո՞րը որինն է իսկապէս. մենք մատնանշել կարող ենք միայն այնպիսիները, որոնք կասկածի տեղիք չեն թողնում հեղինակի նկատմամբ իրենց տնագլխի տառերով (Acrostica). այսպէս օրինակ № 1588 շարականի, 223բ. «Յիսուս միածին» սկսուածքով շարականի տնագլուխ տառերն են «Յովաննես Գառնեցի»(**)։

Նա աղօթասաց է եւ ունի բաւական թուով աղօթքներ եւս գրած։

Հետաքրքրական են նորա խրատական գրուածքները վանականութեան նկատմամբ. «Սբ. հօրն Յովանէսի Գառնեցոյ ասացեալ խրատ կրաւնաւորաց». սկս. «Ամենանուաստ ծառայակիցս ձեր ի Քս. Յս. Յովանէս Գառնեցի...»։ Այս գրուածքը խրատական թուղթ է ուղղուած կրօնաւորներին, յատկապէս մէկին, որի անունն անյայտ է. նա բացատրում է, ի՞նչ է բարին և ի՞նչ մեղքը։ Բարին խորհել, խօսել, վաստակել, տառապեալներին օգնել, դատաստանից վախենալ, անանց փառքին ձգտել, դեղերելով Աստուծոյ ողորմութեան դռներին կրօնաւորական կեանքի դրական կողմերն են. ընդհակառակ մեղք է ամբարտաւանութիւնը, ծուլութիւնը, մեղկութիւնը, երդուելը, մարմին պարարելը, եղբայրատեցութիւնը, հիւանդին չայցելելը, «մեղք է բարկ ծիծաղիլն եւ կատակ առնելն և զատարկաբանելն» և այլն։ Յորդորում է զգաստ լինել, որպէսզի չարը չմտնի մեր ներքին գանձարանը և յափշտակէ։ Մարդիկ անձնիշխան են և իրենց ընտրութեան համապատասխան վարձքի կամ պատժի արժանի։ «Արդ, ո՛վ պատուական եղբայր, զաւրացիր և քաջ լեր և զերասնակ անձնիշխան կամացդ պինդ կալ»։ Յանձնարարում է ողորմածութիւն, «առանց որոյ ոչ ոք կարէ տեսանել զտրն.», խոնարհ լինել, որովհետև «եթէ բուն խոկ ի գլուխ և ի գագաթն առաքինութեա. ելանիցես և խոնարհութի. ոչ ունիցիս, ոչինչ օգտիցիս»։ Ապա բացատրում է աղօթքի ժամերն ու կերպերը. բայց միայն աղօթքը բաւական չէ, «զի ոչ եթէ քաջաթռիչ արձիւն երկու թեօքն միայն լոկ բարձրանա, այլ ունի փետուրս մանր և մեծ, և ամ. զօրութքն. սփռեալ սլանայ ի բարձունս», այդպէս էլ աղօթքի հետ պէտք են ուրիշ առաքինութիւններ, նոյնիսկ արտաքին վայելչութեան կանոններ։ «Պարտ է հանապազ զիրք կարդալ առանին առանձինն», «զեղբօրն կարիսն կատարեա՛, կարելով, կարկատելով, կախելով զչուխայն և զայլ տկարութիսն. բառնալով», եղիր սիրալիր դէպի ամէնքը(*)։

Մի երկրորդ գրութեան վերնագիրն է. «Նորին սուրբ հաւրն Յովհաննէս վարդապետին Գառնեցոյ ասացեալ խրատ ոգեշահ ի Քս.», որ սկսում է «Ծառայակիցս ձեր ի Քս. Յովաննէս Գառնեցի հարցանեմ զողջունէ սիրելեացդ ի տէ., թէ զիա՞րդ կայք յայս դառն դարուս, որ զիպեցաւ և մատնեաց ի սով, ի սուր և ի գերութի.»։ Այս խօսքերով դժուար է, ի հարկէ, որոշել գրութեան ժամանակը, որ եթէ թաթարների արշաւանքի սկզբնական շրջանը չէ, ՉԱ (= 1252) թուի մօրեխի բերած սովն է և ՉԴ թուականի՝ Արղուն ոստիկանի հարկահանութեան հետ կապուած բռնութիւններն ու գերութիւնները(**)։

Առաջին հատուածի մէջ բացատրում է երկնաւոր բարիքն ունենալու միջոցները. ապա երկերկու նախադասութիւններով խրատների մի ամբողջ շարք, մաքուր և հեղինակաւոր լեզուով, երբեմն և բանաստեղծական հակադրութիւններով՝ մի տեսակ առածների ձև տուած։ Գրականութեան այս ձևը սովորական չէ մեզանում, մտքերի ամփոփ և պատկերաւոր արտայայտութեամբ արժանի ուշադրութեան և համեմատելի մասամբ Կեչառեցու հակոտնեայ և պատկերաւոր երկտողանի ասացուածներին, որ տեսանք վերև։ Մէջ ենք բերում քաղուածաբար մի քանի օրինակներ ընթերցողին գաղափար տալու համար։

Որ երկնչի յանքուն որդանցն
Աստ մի խածատիցէ զեղբայր իւր լեզուաւ։

(*) Թորոս Աղբար, Բ. 421։ Հանդ. Ամս. 1895, 247։ Ձեռ. Էջմ. № 662 նժ.։

(**) Ամատունի. Պարականոն շարականներ, 188։

(*) Ձեռ. Էջմ. № 2680. 262բ.։

(**) Գանձ. 267. 346։